ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն .... Ա. Խաչատրյան

«01» 09 -------2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ներսես Մեծի անվան հ124 հիմնական

VIIIա

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Կ.Կարագյոզյան

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022- 2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը) *Դասարանը բաղկացած է տասնյոթ հոգուց՝ 8աղջիկ, 9տղա: Փոքրիկ, համերաշխ կոլեկտիվ է: Աշակերտները աշխույժ են, կազմակերպված, սիրում և հարգում են միմյանց, սիրով կատարում են ուսուցչի տված հանձնարարությունները: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանի առաջադիմությունը նորմալ է: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Դասարանը սիրով է մասնակցում ներդպրոցական և արտադպրոցական բոլոր միջոցառումներին:*

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում *Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը՝ սերտորեն համագործակցելով ուսուցիչների հետ: Անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկել: Շաբաթը մեկ անգամ անցկացնել Դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակությանն ու առողջ կոլեկտիվի ձևավորմանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Թերությունները շտկելու համար դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) : Ամուր հիմքերի վրա պահել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը:*

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն *Հոգևոր դաստիարակությունը շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման,ինչպես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:*

3.2 Գեղագիտական դաստիարակություն *Ձևավորել մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձ: Այդ նպատակով կազմակերպել այցելություններ գրողների տուն-թանգարաններ, աշակերտներին ծանոթացնել ազգային ավանդույթներին ու տոներին: Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:*

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչությունից: Ուստի այս նպատակով կազմակերպել զրույցներ և քննարկումներ: Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն*

բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստի ձևերը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը, զերծ մնան վնասակար սովորություններից: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում: Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում: Դասասենյակի մաքրության ապահովում և նախապատրաստում ձմռանը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է: Ինչպես նաև բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում, մասնակցություն մերձդպրոցական տարածքների կանաչապատման աշխատանքներին:

4. Դպրոց-ընտանիք կապը Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, քանի որ սովորողի դաստիարակության գործում անհրաժեշտ է ծնողի աջակցությունը: Դրա համար պետք է ծնողներին ներգրավել կատարվելիք բոլոր աշխատանքների մեջ:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
I	Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները համավարակի ժամանակ	15.09-19.09	դասղեկ
II	Զրույց «Հանդուրժողականություն» թեմայով		դասղեկ
III	Զրույց-քննարկում «Իմ 31-ամյա հայրենիք»		աշակերտ դասղեկ
IV	«Պետական խորհրդանիշներ» թեմայով զրույց:Նպատակն է աշակերտներին ներկայացնել ծագման և ձևավորման ուղին:		աշակերտ դասղեկ
V	«Իմ ուսուցիչ, իմ բարեկամ» թեմայով զրույց		դասղեկ աշակերտ
VI	«Եթե ես լինեի ...» թեմայով քննարկում: Նապատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները:		աշակերտ դասղեկ
VII	«Կարողությունների հստակեցում» թերթիկի միջոցով հստակեցնել, թե որ կարողություններն են ավելի զարգացած:		աշակերտ դասղեկ
VIII	Զրույց «Երևանն իմ տունն է» թեմայով		աշակերտ դասղեկ
IX	«Ազգ և պետություն» թեմայով բաց քննարկում և վերլուծություն:		աշակերտ դասղեկ
X	« Պատասխանատու քաղաքացի » աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան, թե ինչպիսին պիտի լինի յուրաքանչյուր քաղաքացի:		աշակերտ դասղեկ
XI	« Կարող եմ օգտակար լինել» թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարին և դրական հատկանիշները:		աշակերտ դասղեկ
XII	«Ես էլ քեզ նման եմ » թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:		աշակերտ դասղեկ
XIII	«Բնական աղետներ» ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և ինչ անել այդ ժամանակ դրանց		աշակերտ դասղեկ
XIV	Ինչպես են դիմավորում Ամանորը հայերը և մյուս ազգերը		աշակերտ դասղեկ
XV	Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում		դասղեկ
XVI	«Լրատվամիջոցներ և կերպարներ» թեմայի միջոցով լուսաբանել արդի ժամանակաշրջանում լրատվամիջոցների դերը:		աշակերտ դասղեկ
XVII	<< Փոքրիկ պատմություններ անհատի և		աշակերտ

	հասարակության խնդիրների մասին >> նպատակն է աշակերտներին տեղեկացնել, թե մարդկությունը ինչ ժամանակաշրջան է անցել		դասղեկ
XVIII	Զրույց «Հայոց բանակ» թեմայով: Խոսել բանակի կազմավորման, անցած ուղու մասին:		աշակերտ դասղեկ
XIX	« Ազգային և միջազգային տոներ» նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները:		աշակերտ դասղեկ
XX	« Եկեղեցին և ազգը» քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:		աշակերտ դասղեկ
XXI	Գիրքն իմ կյանքում		աշակերտ դասղեկ
XXII	<< Քաղաքացիական ինքնություն >> կիմանան ինչ է քաղաքացիական ինքնությունը կհասկանան, թե քաղաքացի լինելն ինչքանով է առնչվում իրենց հետ:		աշակերտ դասղեկ
XXIII	« Ինչպես վարվել աղբի հետ» օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա:		աշակերտ դասղեկ
XXIV	«Մա՛յր, սրբություն ամենասուրբ»		աշակերտ դասղեկ
XXV	« Էկոլոգիական հիմնախնդիրներ» : Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապետության ավելի ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին		աշակերտ դասղեկ
XXVI	«Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը»		աշակերտ դասղեկ
XXVII	«Ապագայի ծառը» խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները		աշակերտ դասղեկ
XXVIII	<< Նախապաշարումների ոստյան >> ներկայացնել, թե ինչպես է զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդը: Իրավիճակը հաղթահարելու ուղիներ որոնել:		աշակերտ դասղեկ
XXIX	« Հայոց Մեծ եղեռն» աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը: Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն		աշակերտ դասղեկ
XXX	« Պետք է արդյոք, խնայել» խթանելով		աշակերտ

	աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք		դասղեկ
XXXI	«Սպառողների իրավունքներ» ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները՝ որպես սպառողներ:		աշակերտ դասղեկ
XXXII	Մայիսը հաղթանակների ամիս է:		աշակերտ դասղեկ
XXXIII	«Ազգային գարթոն» ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:		աշակերտ դասղեկ
XXXIV	«Եթե ես լինեի...» թեմայով զրույց ապագայի սպասելիքների, նպատակների մասին		աշակերտ դասղեկ